



15 Դեկտեմբերի, 2011թ.

Ե-1811

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Հ. ԱՐԴԱՀԱՄՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Աբրահամյան,

Ձեր ներողատուությունն եմ հայցում ներքոհիշյալ հարցով անհանգստացնելու համար, սակայն հարկադրված եմ:

Կենտրոնական պետական կառույցները՝ հայտարարելով հայկական պետական իշխանության տարբեր ճյուղերի ժողովրդավարացման ձգտման և նրանց գործունեությունը թափանցիկ և հրապարակյին դարձնելու մասին, համատարած սկսել են քաղաքացիական հասարակության կառույցների հետ համագործակցության համաձայնագրեր ստորագրել: Որպես կանոն, նման համագործակցությունն արտահայտվում է տվյալ պետական կառույցների կողմից մշակված և ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների կողմից ՀԿ-ներին փոխանցված օրենսդրական ակտերի համապատասխան նախագծերի հանրային լուսմաների կազմակերպմամբ: Ընդ որում, պետք է նշել, որ նշված նախագծերի հեղինակները, մեծ մասամբ այդ հասարակական լուսմաներին չեն մասնակցում կամ մասնակցում են որոշում ընդունելու լիազորություն չունեցող ներկայացուցիչների միջոցով (դիտորդի կարգավիճակով):

Նշված հանրային լուսմաների փորձը ցույց է տալիս, որ լուսման արդյունքները՝ քննարկվող օրենքների նախագծերի վերաբերյալ, կամ դրանցում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀԿ-ների առաջարկություններն ու դիտողությունները, այդ նախագծերի հեղինակների համար կրում են դեկլարատիվ բնույթ և անուշադրության մատնվում: Ավելին, հանրային լուսման կամ չեն անցկացվում կամ անցկացնելու դեպքում էլ դրանց արդյունքները /արձանագրությունները/, որպես քննարկվող նախագծի վերաբերյալ հանրային կարծիք, օրենսդիր մարմին չեն ներկայացվում:

Նման դեպք տեղի ունեցավ նաև «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի նախագծի, որն ուժի մեջ է մտել 01.12.2010թ., քննարկման և ընդունման ժամանակ: Գործնականում թե գործադիրը, որպես նշյալ օրենքի նախագծի հեղինակ, թե օրենսդիրը, որպես օրենք ընդունող իշխանություն, հանրային լուսման չեն կազմակերպել, իսկ հանրային կարծիքի հանդեպ նման մոտեցումը հանգեցրեց նրան, որ սկսվեցին հասարակական ակցիաներ՝ կանանց կողմից պիկետների անցկացման ձևով, որոնք իրենց բացասական վերաբերմունքն ու կարծիքն են արտահայտում վերոնշյալ օրենքի նախագծի մասին:

Հասարակության դժգոհությունը հանգեցրեց վերոնշյալ օրենքի մի շարք դրույթների քննարկմանը ՀՀ Հանրային խորհրդի նիստում՝ 06.12.2010թ., որի աշխատանքներին մասնակցեց նաև ՀՀ նախագահը: Նա ևս իր մտահոգությունը հայտնեց սույն օրենքի որոշ դրույթների վերաբերյալ: Ավելին, ՀՀ կառավարության նիստի ժամանակ (09.12.2010թ.) ՀՀ վարչապետը նշեց, որ «օրենսդրական փոփոխությունները կրում են ժամանակավոր բնույթ և բացառապես պայմանավորված են ճգնաժամով», և չբացառեց, որ մեկ տարի անց ամեն ինչ կվերադառնա իր տեղը, այսինքն մայրերը կարող են երեխաների խնամքի համար նպաստ ստանալ նույն կարգով («Նովոյե վրեյա» թերթ, 14.12.2010):

Ցավում եմ, որ ՀՀ վարչապետը, մեղմ ասած, այսպիսի ոչ համարժեք վերաբերմունք է ցուցաբերում հանրապետության օրենսդիր իշխանության կողմից արդեն իսկ ընդունված և պաշտոնապես հրապարակված ՀՀ օրենքի նկատմամբ, որն ի դեպ իր էությունը պետք է կոչված լիներ մեր երկրի սոցիալ-տնտեսական և պաշտպանական ներուժը ամրապնդելուն: Սույն դեպքում, ՀՀ վարչապետի կողմից այն ժամանակավոր ճգնաժամով հիմնավորելը տեղին չէր:

Ժողովրդագրական իրավիճակն ու արտագաղթի աճը, Հանրապետությունում առկա ռազմաքաղաքական պայմաններում ՀՀ կառավարությանը պարտադրում կամ թելադրում են այնպիսի

միջոցառումներ իրականացնել, որոնք կխթանեն ծնելիության աճը, քանզի Հայրենիքի պաշտպանը, առաջին հերթին, պաշտպանում է իր ընտանիքը, իր երեխաներին և երկիրն ամբողջությամբ:

Սակայն, ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նոր նախագծի նախապատրաստման և քննարկման գործընթացը, ինչպես նաև դրա հասարակական լուսման անցկացումը և ՀՀ Ազգային ժողովում քննարկումները որոշակի ժամանակ են պահանջելու, որի ընթացքում, կսահմանափակվեն ս. թ. դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ Օրենքով նախատեսված շահառուների իրավունքներն ու շահերը:

Հետևաբար, վերոշարադրյալը հաշվի առնելով և ելնելով սույն հարցի լուծման հրատապությունից, նպատակահարմար է անհապաղ քայլեր ձեռնարկել <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ օրենքի գործողության ժամկետը հետաձգելու կամ կասեցնելու ուղղությամբ, այդ նպատակով ընդունել համապատասխան օրենք, միննույն ժամանակ ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.10.2005թ. ընդունված <Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին> ՀՀ օրենքը գործողության մեջ թողնել մինչև <Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին> ՀՀ օրենքի՝ նոր խմբագրությամբ, ուժի մեջ մտնելը:

Հարգանքով՝



ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Գործադիր տնօրեն